

Հասարակական գիտություններն ակադեմիական ուսուցման համակարգում

Հասարակական գիտությունները, որոնք իրականության միջնորդավորված արժանաբանում, հասարակության, դրա առանձին խմբերի եւ անհատների գիտական հիմնավոր դասկերտումներն են անցյալի եւ ներկայի մասին:

Մարդկության բազմադարյան իմաստությամբ կուսակցված փիլիսոփայական, ֆաղաֆագիական, ժառանգական գիտելիքները, հազարամյակների ժառանգական հիշողությունը հնարավորություն են տալիս ոչ միայն բացատրել ներկա իրողությունները, այլև կանխատեսել հասարակության զարգացման հնարավոր միտումները:

Հասարակական գիտությունների դերի գիտակցմամբ է կազմակերպվում փիլիսոփայություն, ժառանգության, ֆաղաֆագիական, մշակութաբանության դասավանդումը հայկական գյուղատնտեսական ակադեմիայում (ՀԳԱ):

Ուսումնական գործի կազմակերպման հաջողությունը դայմանավորված է մի քանի փոխկադրակցված գործոններով:

ՀԳԱ-ի հասարակագիտության ամբիոնում դասավանդում են փորձառու երեք դոկտորներ եւ յոթ դոցենտներ: Համալրելու է գալիս նաեւ երիտասարդ դասախոսների նոր սերունդը:

Բուհական աշխատանքի հաջողությունը դայմանավորված է ուսումնադաստիարակչական գործընթացներում դասախոսների հետազոտական աշխատանքի արդյունքների ներդրմամբ: Դոկտոր Ս. Ս. Հայրապետյանի վերջերս լույս տեսած «Պատմագիտության մեթոդաբանության հիմնախնդիրներ» ժառանգփիլիսոփայական աշխատության շնորհիվ հիմնադրված կիրառվում են ոչ միայն գիտություն, այլև ուսումնական գործընթացում:

Բուհական ուսանողությունը լավ ընդունեց Բ. Խաչատրյանի եւ Ս. Հայրապետյանի «Քաղաքագիտություն» դասագիրքը:

Հայ ժողովրդի համար Երզրադային այս դասին, երբ անորոշ են հասարակական առաջադիմության հեռակարգերը եւ անկասար ուղիները, մեծանում է հասարակական գիտությունների գործնական-դաստիարակչական դերը:

Դասավանդման ընթացքում վերլուծվում են իրողությունները եւ արվում կանխատեսումներ:

Ուսանողական լսարանում դասախոսը հաճախ է ընդգծում Ջ. Քենեդիի այն միտքը, որ «Չի կարելի անընդմեջ մտածել այն մասին, թե ինչ է երկիրը ե՛զ սալիս: Օրվա ընթացքում երբեմն խորհել եւ այն մասին, թե ինչ է դուք սալիս երկիրն»:

Ամբիոնի կողմից կազմակերպվող ամենամյա ուսանողական գիտական զեկու-

ցումների թեմաներն ընտրվում են այնպես, որ մի կողմից այն միտված լինի ուսանողների ընդհանուր եւ մասնագիտական գիտելիքների խորացմանը, իսկ մյուս կողմից՝ հայրենասիրության եւ մարդկային հասկանիքների դաստիարակմանը:

ՀԳԱ-ի դասախոսների գիտահետազոտական աշխատանքներում զգալի տեղ է հասկացվում այնպիսի արդիական խնդիր լուծմանը, ինչպիսիք ազգային եւ դեմոկրատիկ գաղափարախոսության ստեղծումն է դարավոր ժառանգության եւ ժամանակակից արժեքների ու ավանդույթների հիմքի վրա:

Հասարակագիտության ամբիոնը սոցիոլոգիական հետազոտություններ է կատարում ուսանողության Երզրանում, նրանց հետաքրքրությունների Երզրանակները, գիտելիքների մակարդակը, սոցիալական աշխուժության աստիճանը դարձելու նպատակով, ինչը կօգնի ժամանակակից մոդելի ստեղծմանը:

Ժամանակի թելադրանքով աճում է հասարակական գիտությունների դերը, փոխվում են ուսումնասիրությունների բուն խնդիրներն ու նպատակները, հետազոտության ձևերն ու եղանակները:

Կյանքն աղացուցում է, որ ժառանգական այս կամ այն ժամանակահատվածում «նիրհող» ուսանողությունն անզամ հանգամանքի բերումով աշխուժանում է դառնալով հասարակությունը կայունացնող կամ խաթարող ուժ:

Առանց ուսանողության Երզրանում գիտ-ֆաղաֆակական մտածողության ձևավորման՝ անհնար է մշակել իշխանություն-հասարակություն, հասարակություն-իշխանություն կայուն համագործակցության մեխանիզմ:

Հասարակագիտական միտքը երիտասարդությանը հրամցելու է ոչ թե դաստիարակչական դերակրություն, այլ իրատեսական մոտեցումներ հասարակական առաջադիմության հնարավոր ուղիների ընտրության խնդրում: Կարևոր է, որ ուսանողությունն ինքը անմիջականորեն մասնակցի խնդրի ֆունկցիաները:

ՀԳԱ հասարակագիտության ամբիոնը, ժամանակի ոգուն համադասախոսան, երիտասարդության ֆունկցիաներն է ներկայացնում հասարակության հետագա առաջընթացի երկու, գերեք համարժեք մոտեցումներ՝ մի կողմից կրթության, մշակույթի, կրոնի, փիլիսոփայության, ժառանգության, մյուս կողմից՝ ժամանակակից համակարգի զարգացման, կարգ ու կանոնի, իշխանության ավստրիսար կառավարման եղանակների հարցում:

Սերգեյ Հայրապետյան

ՀԳԱ-ի հասարակագիտության ամբիոնի վարիչ

Հարկատու-պետություն փոխհարաբերությունների կառուցման և հետագա բնական ընթացքի համար մեծ դեր են կատարում հարկ վճարողների սպասարկման բաժինները, որոնք գործում են բոլոր տարածքային հարկային տեսչությունների կազմում: Այդ բաժիններն այն օդակն են, որն ապահովում է տնտեսավարող սուբյեկտի ամբիջակ կապը հարկային համակարգի հետ: Կախված այն հանգամանքից, թե հարկ վճարողների սպասարկման բաժինն ինչպիսի որակով է կատարում իր աշխատանքը և գործառնությունները, մեծադրվում է հարկատուի համապատասխան վերաբերմունքն ու տրամադրվածությունը պետության հետ կառուցվող փոխհարաբերություններում: Այդ բաժինների աշխատակիցներից պահանջվում է հարկատուի լսելու և օգնելու ունակություն, պատրաստակամություն և համբերություն: Հարկ վճարողների սպասարկման բաժինները զբաղվում են նրանց նախնական իրազեկմանը, հաշվառմանը և նրանց կողմից ներկայացվող հարկային հաշվարկների, հայտարարագրերի, հաշվապահական հաշվետվությունների ու հարկային պարտավորությունների կատարման հետ կապված այլ փաստաթղթերի ընդունման աշխատանքներով: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ հարկային օրենսդրության, և ընդհանրապես, հարկային համակարգի հետ իր փոխհարաբերություններին առնչվող հարցերով կարող է դիմել իր գրանցման վայրի տարածքային հարկային տեսչության, որտեղ գործող հարկ վճարողների սպասարկման բաժիններն իրենց գործառնությունների շրջանակներում կտրամադրեն նրանց անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցություն: